# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**19.06.2018 11:52**

2018 թվականի հունիսի 16-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը քննելով քաղաքացի Անուշավան Ղազարյանի դիմումի հիման վրա հարուցված թիվ ԿԳ-17179 կարգապահական գործը որոշել է կարգապահական պատասխանատվության ենթարկել ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Վահագն Մանուկյանին:

Փաստաբանը մեղավոր է ճանաչվել Փաստաբանի վարքագծի կանոնակարգի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.1.10, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի խախտումների համար, իսկ որպես տույժ փաստաբանների պալատի խորհուրդը որոշել է դադարեցնել փաստաբան Վահագն Մանուկյանի թիվ 749 արտոնագրի գործողությունը:

*Ծանոթություն: Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })